Երկրորդ ընթերցում

Նախագիծ

Կ-818$^{1}$-08.02.2010-ՏՀ-010/2

# Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի  Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ Ո Ւ Թ Յ Ա Ն
# Օ Ր Ե Ն Ք Ը

## <<ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ>> ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (30 մայիսի 2001 թվականի, ՀՕ-193) 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի 11-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| << 11. ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ԲՆԱԳԱՎԱՌ | | | | | | | | | | |
| 1. | Փոստային կապի գործունեություն | ԿՄ | Բ | Ա | - | - | - | - | - | >>: |

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:

Հոդված 3. Անցումային դրույթներ

Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 11-րդ բաժնով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի համար նախկինում տրամադրված լիցենզիաները ենթակա են վերաձևակերպման՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 3-ամսյա ժամկետում:

Սույն մասով նշված ժամկետում լիցենզիայի վերաձևակերպման դեպքում <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում: Սույն մասում նշված ժամկետում լիցենզիաները չվերաձևակերպելու դեպքում լիազոր մարմինը կասեցնում է լիցենզիաների գործողությունը:

ՀՀ կառավարություն

ԱՄՓՈՓԱԹԵՐԹԻԿ

ՀՀ Ազգային ժողովում առաջին ընթերցմամբ ընդունված <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ ներկայացված առաջարկությունների, կատարված փոփոխությունների և լրացումների

<table>
<tr><th>հ/հ</th><th>Առաջարկության հեղինակը</th><th>Հոդվածը, կետը և ենթակետը</th><th>Առաջարկության բովանդակությունը (փոփոխությունը կամ լրացումը)</th><th>Եզրակացություն</th></tr>
<tr><td>1.</td><td>ՀՀ կառավարություն</td><td>Հոդված 1</td><td><<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին>> ՀՀ օրենքի նախագիծը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.<br><<Հոդված 1. <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի (30 մայիսի 2001 թվականի, ՀՕ-193) 43-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների աղյուսակի 11-րդ բաժինը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
<table>
<tr><td>11. Փոստային կապի բնագավառ</td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td><td></td></tr>
<tr><td>1. Փոստային կապի գործունեություն</td><td>ԿՄ</td><td>Բ</td><td>Ա</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td><td>-</td></tr>
</table>
Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից վեց ամիս հետո:<br>Հոդված 3. Անցումային դրույթներ<br>Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո <<Լիցենզավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 11-րդ բաժնով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակի համար նախկինում տրամադրված լիցենզիաները ենթակա են վերաձևակերպման՝ սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո 3-ամսյա ժամկետում:<br>Սույն մասով նշված ժամկետում լիցենզիայի վերաձևակերպման դեպքում <<Պետական տուրքի մասին>> Հայաստանի</td><td>Կատարվել են համապատասխան փոփոխություններ:</td></tr>
</table>

| | | | | |
|---|---|---|---|---|
| | | | Հանրապետության օրենքով լիցենզիայի վերաձևակերպման համար սահմանված պետական տուրքը չի գանձվում: Սույն մասում նշված ժամկետում լիցենզիաները չվերաձևակերպելու դեպքում լիազոր մարմինը կասեցնում է լիցենզիաների գործողությունը:<br>Միաժամանակ, 1-ին հոդվածով նախատեսվող 10.1-րդ բաժնի խմբագրությունն անհրաժեշտ է համապատասխանեցնել <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջներին, որի համաձայն իրավական ակտում կատարվող փոփոխությունների կամ լրացումների ձևը (տեսքը) պետք է համապատասխանի փոփոխվող կամ լրացվող իրավական ակտի ձևին (տեսքին), մասնավորապես հիշյալ հոդվածի խմբագրությունն անհրաժեշտ է նախատեսել աղյուսակի ձևով:շարադրել հետևյալ խմբագրությամբ. | |